ՎԱԽՃԱՆՎԵԼ Է
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀՈՒՍԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՂԴԱՍՅԱՆԸ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից խոր ցավով տեղեկացնում ենք, որ հուլիսի 28-ին Ամերիկայի Միացյալ Նահանգներում, կյանքի 70-րդ տարում, վախճանվել է Գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Բաղդասյանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, իր ցավակցությունն է բերել հանգուցյալ Սրբազան Հոր հարազատներին ու մերձավորներին:

Հանգուցյալ Սրբազանի հոգու համար Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կկատարվի հոգեհանգստյան արարողություն:

«Ցիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

***

Հանգուցյալ Սրբազանը ծնվել է 1934 թ. ԱՄՆ Ռոդ Այլն նահանգի Փրովիդենս քաղաքում:

Նախնական և բարձրագույն ուսումը ստացել է ծննդավայրում՝ երկար տարիներ իբրև դպիր ծառայելով տեղի Ս. Մահակ - Ս. Մեսրոպ եկեղեցում:

1955 թ. ընդունվել է Երուսաղեմի Ս. Հակոբյանց Ժառանգավորաց վարժարանի ընծայարան:

1959 թ. ավարտելով վարժարանը՝ ձեռամբ Տ. Սուրեն արքեպիսկոպոս Քեմհաճյանի ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Սրբազան Հայրը Ս. Հակոբյանց վանքում վարել է զանազան պաշտոններ՝ ավագ թարգման, կալվածքների պատասխանատու, Ս. Աստվածածին վանքի տեսուչ:

1960 թ. Իսրայելի պետության մոտ նշանակվել է պատրիարքական ներկայացուցիչ և վանքապատկան կալվածքների պատասխանատու: Այդ շրջանում ստացել է ծայրագույն վարդապետության աստիճան:

1971 թ. ընդունվել է ԱՄՆ «Սեսրն հելլ» համալսարան և նույն տարում նշանակվել Լեվինգթոնի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ:

1976 թ. նշանակվել է ԱՄՆ հայոց Արևելյան թեմի փոխառաջնորդ:

1991 թ. ընտրվել է Երուսաղեմի Ս. Աթոռի տնօրեն ժողովի անդամ:

1992 թ. նշանակվել է վանքապատկան կալվածքների տեսուչ:

Նույն թվականին, ձեռամբ երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս:

1998 թ. ի վեր հանգուցյալ Սրբազան Հայրն իր ծառայությունն էր բերում Միացյալ Նահանգաց Արևելյան թեմում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ